

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Չորեքշաբթի, 2 Ապրիլ. Յունաստանի ազգային օրոտան առիթով Երուսաղէմի մէջ Յունաստանի Գլխաւոր հիւպատոս՝ Տիար Դիմիտրիոս Անգելոսոպուլոսին կողմէ Նոթր Տամ պանդոկին մէջ կազմակերպուած ընդունելութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գլխաւորութեան Դիւանապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Երեքշաբթի, 8 Ապրիլ. Զատիկական տօներուն ընդառաջ Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ մէկտեղուեցան Սուրբ Երկրի Պատրիարքները եւ հոգեւոր պետերը՝ քննարկելու Զատիկական շնորհաւորանքներուն առնչուող եւ միասնական հաղորդագրութեան բովանդակային հարցեր:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Նոյն օրը Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ Ս. Աթոռոյս Կրօնական Գերագոյն Ատեանի Ատենապետ՝ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան եւ Ատենադպիր՝ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան այցելեցին Յորդանանի Հաշիմական Թագաւորութիւն՝ ի մօտոյ ծանօթանալու Կրօնական Գերագոյն Ատեանին առնչուող հարցերուն:

Հինգշաբթի, 10 Ապրիլ, 2025-ի կէսօրին, պատւիրակութիւնը վերադարձաւ Սուրբ Աթոռ:

Հինգշաբթի, 10 Ապրիլ. Երուսաղէմի փոխ-քաղաքապետ՝ Տիար Ադիր Շուարց, ընկերակցութեամբ Տիար Եսիո Տանի այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Դիւանապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի հետ:

Այցի ընթացքին քննարկուեցաւ քրիստոնէական հաստատութիւններու կամ հոգեւորականներու ուղղութեամբ հրեայ ծայրայեղականներու թշուառութեամբ հրեայ ծայրայեղականներու թշուառութեամբ տհաճ երեւոյթը, որը Հին Քաղաքին մէջ նոր բան մը չէ, սակայն վերջին տարիներուն առաւել թափ առած է, մասնաւորապէս խաղաղ եւ հանգիստ հայկական թաղամասին սրտին մէջ գտնուող գլխաւոր փողոցին վրայ:

Տիար Շուարց ինք ականատես եղած է այդ

երեւոյթին, երբ Պատրիարքարանի դիմաց՝ Վանքին դուռը, կը սպասէր Հայր Աղանի հետ հանդիպման: «Երիտասարդ մը վանքի դրան առջեւէն անցած ատեն ցուցադրական կերպով երկու անգամ թքեց: Ինքս իմ աչքերով տեսայ այդ վիրաւորանքը, որ կրեց ներս մտնող հոգեւորականներէն մին: Ասիկա ամօթալի է, չեմ կրնար հաւատալ, թէ այդ գործողութիւնը կատարուեցաւ հրէութեան անունով, որովհետեւ այդ ոչ միայն հրէութիւն չէ, այլ նաեւ Իսրայէլի հետ որեւէ առնչութիւն ունի», իր խօսքին մէջ ըսած է փոխ-քաղաքապետը:

Արժեւորելով Երուսաղէմի փոխ-քաղաքապետի ղեկավար պաշտօնը՝ Տիար Ադիր Շուարց ըսած է. «Մեր երկիրը ղեկավարելը նաեւ բարոյական պատասխանատուութիւն է: Պատասխանատուութիւն՝ հանդուրժող եւ յարգալից վերաբերմունք ունենալու դէպի ոչ հրեաները, պայքարելու այն արատաւոր երեւոյթներու դէմ, որոնք չեն արտացոլեր մեր կրօնական արժէքները եւ Երուսաղէմի հոգին»:

Հանդիպման վերջաւորութեան փոխ-քաղաքապետը յոյս յայտնած է, որ ինչպէս վերջին տարիներուն որոշ յաջողութիւններու հասած են այս երեւոյթը նուազեցնելու ուղղութեամբ, պիտի շարունակեն աւելիով իրենց կարելին ընել՝ արժէքային կրթութեամբ, վերահսկողութեամբ եւ անձնական օրինակներով դրական փոփոխութիւններ արձանագրելու համար:

Չորեքշաբթի, 23 Ապրիլ. Առաւօտեան ժամը 9:00-ին, Ս. Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Ուրբաթ, 25 Ապրիլ. Սուրբ Յարութեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 10:15-էն սկսեալ, յաջորդաբար Հայոց Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Հապէշ, Ասորի, Դպտի Ուղղափառ եւ Բողոքական Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Իսկ ժամը 11:00-ին Յունաց Ամենապատիւ

Տ. Թէոֆիլոս III Պատրիարքն իր միաբաններով:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 16:00-ին, Սուրբ Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Գերշ. Տ. Թէոֆորոս Եպս. Զաքարեանի, Զատկական շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Հապէշ եւ Դպտի եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Դպտոց Պատրիարքարան շնորհաւորական այցէն ետք, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը այցելեց նաեւ Պատրիարքարանին կից Սուրբ Անտոն եկեղեցի, ուր միասնական «Հայր Մեր» ըսաւ Սուրբ Խորանին առջեւ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 16:00-ին, Ասորի Տ. Սիմոն Քահանայի քահանայութեան յիսնամեայ յոբելեանին առիթով Ասորոց Սուրբ Մարկոս վանքին մէջ մատուցուած Սուրբ Պատարագին, ապա ընդունելութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 27 Ապրիլ. Երեկոյեան ժամը 5:00-ին, Սուրբ Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը՝ հանդիսապետութեամբ Գերշ. Տ. Թէոֆորոս Եպս. Զաքարեանի, շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Ասորոց եպիսկոպոս՝ Գերշ. Տ. Անթիմոս Ճաք Յակոբի եւ Միաբանութեան:

Հինգշաբթի, 1 Մայիս. Իսրայէլ պետութեան Անկախութեան 77-րդ տարեդարձին առիթով նախագահ՝ Վսեմաշուք Տիար Իսահակ Հերցոկի եւ Առաջին տիկին՝ Ազնուափայլ Միխալ Հերցոկի կողմէ նախագահական պալատին մէջ տրուած ընդունելութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի:

Չորեքշաբթի, 14 Մայիս. Սուրբ Աթոռոյս գահակալ եւ Կրօնական Գերագոյն Ատենանի նախագահ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի օրհնութեամբ եւ Կրօնական Գերագոյն Ատենանի որոշումով, Ատենապետ՝ Տ. Թէոֆորոս Եպս. Զաքարեան, Ատենադպիր՝ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան եւ Ատենանի անդամ՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան, Մայիս 14-16 օրերուն այցելեցին Յորդանանի Հաշիմական Թագաւորութիւն՝ ի մօտոյ ծանօթանալու Կրօնական Գերագոյն Ատենանին առնչուող հարցի մը:

Պատուիրակութեան Յորդանանի սահմանին դիմաւորեց Յորդանանի եւ շրջակայից Պատ-

րիարքական փոխանորդ՝ Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան, եւ այցի ողջ ընթացքին առաջնորդեց Պատուիրակութեան գործունէութեանց:

Ուրբաթ, 16 Մայիս, 2025-ի կէսօրին, պատուիրակութիւնը վերադարձաւ Սուրբ Աթոռ:

Ուրբաթ, 16 Մայիս. Զատկական տօներու առիթով Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը յատուկ ընթրիք մը տուաւ Պատրիարքարանի հանդիսասրահին մէջ:

Միջոցառումը կազմակերպուած էր ի պատիւ Երուսաղէմի ընդհանուր հիւպատոսներու, դիւանագիտական ներկայացուցիչներու եւ հոգեւոր առաջնորդներու: Հանդիսութեան միջնորդող ողորւած էր Զատկուայ տօնական ջերմութեամբ, իսկ սրահը՝ բարեկամական զրոյցներով:

Հինգշաբթի, 22 Մայիս. Սուրբ Յարութեան Տաճարին մէջ Քրիստոսի Սուրբ Գերեզմանին առջեւ շնորհակալութեան Կաթողիկեան Սուրբ Պատարագ մատուցուեցաւ Հռոմի Լեւոն XIV Պապի ընտրութեան ուրախալի առիթով:

Սուրբ Պատարագը մատուցեց Երուսաղէմի Լատին Պատրիարք՝ Ամեն. Տ. Փիերպատիսթա Արք. Փիցապալա, որուն կը մասնակցէին նաեւ Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Գերապատիւ Տ. Ատողֆօ Արք. Տիսո Ըլանայ եւ Ֆրանչիսկեան Քիւսթոս՝ Հայր Ֆրանչեսկո Փաթոն:

Սուրբ Պատարագին ներկայ էին Սուրբ Յարութեան իրաւատէր միւս համայնքներու տեսուչները, քոյր եկեղեցիներու, արեւելեան եւ բողոքական եկեղեցիներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ դիւանագիտական պաշտօնեաներ:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Սուրբ Յարութեան Տաճարի Առժամեայ Տեսուչ՝ Տ. Արքայ Աբղ. Սարուխանեան:

Երկուշաբթի, 9 Յունիս. Երուսաղէմի Եբրայական համալսարանի մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշ-երեկոյ գիտաժողով: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան, Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան, Տ. Աղան Վրդ. Գոգչեան եւ Տ. Սիւրբ Աբղ. Թաքուշեան, իսկ Երուսաղէմի Հայ համայնքին կողմէ՝ Տիար Գէորգ Նալպանտեան: Ներկայ էր նաեւ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան:

Պատրիարքութեան կողմէ խօսք առաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Յուշ-երեկոյ գիտաժողովի վերջաւորութեան ներկաները պատուուեցան հիւրասիրութեամբ:

Կիրակի, 13 Յուլիս. Ֆրանսայի Ազգային օրուայ առիթով Երուսաղէմի՝ Հին քաղաքի Ֆրանսիականներու Սուրբ Աննա եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ:

Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Նիկոլաս Գասիանիդէսի հրաւերով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան եւ Առժ. Աւագ Թարգման՝ Տ. Սիրոն Աբղ. Թաքուշեան:

Ուրբաթ, 25 Յուլիս. Ֆրանչիսկեան Ուխտի նոր Մեծաւոր՝ Հայր Ֆրանչեսկօ Իէլպօ կատարեց պաշտօնական իր անդրանիկ մուտքը Սուրբ Յարութեան Տաճար:

Տաճարի մուտքին Հայր Իէլպօ դիմաւորուեցաւ Ս. Յարութեան Տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչներէն: Դիմաւորման արարողութեան Հայոց կողմէ ներկայ էին Աւագ Թարգման՝ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան, Ս. Յարութեան Տաճարի Առժամեայ տեսուչ՝ Տ. Տիրան Վրդ. Յակոբեան եւ Փոխ-տեսուչ՝ Տ. Արթակ Աբղ. Սարուխանեան:

Շաբաթ, 26 Յուլիս. Ֆրանչիսկեան Ուխտի նոր Մեծաւոր՝ Հայր Ֆրանչեսկօ Իէլպօ կատարեց պաշտօնական իր անդրանիկ մուտքը Բեթղէհէմի Սուրբ Ծննդեան Տաճար:

Դիմաւորման արարողութեան Հայոց կողմէ ներկայ էին Աւագ Թարգման՝ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան եւ Սուրբ Ծննդեան Տաճարի տեսուչ՝ Տ. Ասպետ Մ. Վրդ. Պալեան:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

